

ճանապարհը կտրէր «երիվարով» (Փրպ. 226), մինչդեռ բնակութեամբ մերձաւորք հետիոտն կու գան ու կը դառնան, ինչպէս ըրին Տրդատ բագրատունի Բակուրի ընթրեաց, եւ Խոսրով գարդմանացի՝ Շապհոյ խնճոյից, անոնց բնակած քաղաքին մէջ ունենալով իրենց առժամանակեայ հիւրանոց «վանքը» կամ «տունը» (Խոր. 142, 250):

Մեր նախարարք միայնակ չեն գար ճաշին. անոնց աստիճանն ու շուքը կը պահանջէ՝ որ իրենց հետեւի ծառայից խումբ մ'ալ՝ աւելի կամ նուազ թուով: Այսպէս վասակ՝ «բազմամբոյս զնդառ գայր յարքունիս» (Եղիշ. 118), ինչպէս պատշաճ էր Հայոց մարզպանի մը: Եւ եթէ այդպէս կ'երթայ Յազկերտի կոչնոց, նոյն պերճութիւնն աւելի եւս պիտի ցուցնէր անշուշտ իւր հայ իշխանակցաց հրաւիրմանց առթիւ: Հոս ալ կայ նմանութիւնն օտար բարքերու. ժամանակի բիւզանդացի ազնուական կոչնականաց նոյն ոճով կ'ընկերեն իրենց ստրուկները (Ոսկ. թղթ. Ա, 534), որոնք հին Հելլենաց մէջ ալ կ'երթան ու կը ծառայեն եւս իրենց տերանց (Դար. Ա, 1274):

Հիւրերն երբ կը հասնին կոչնատէր իշխանին ամրոցին կամ պալատան առջեւ,